

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54րդ ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 7

14 ՓԵՏՐՎԱՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատիւը. ՀԱՐՄԱԿ.—Պոլսական ամուսնութիւններ. Սարգիս աղային նշանուիք (Վեպ) Շ.
ՇԱԽԱՐՇ.—Գիտական Բրոնիկ. «Անքեյ հեռագիր». ՆՈՒՊԱՐ.—Թատերական աշխարհէն.
«Ժան Հասիկի ներկայացումները». Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ.—Ճաբոնցի զինուորը. Թարգմ.
X.—Վերլուծում (Բանաստեղծութիւն) Վ.—Քաղաքական աշխարհ.—Խմբագրական Նօթեր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բաւսուն դրո.
եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ
5 բուլղի: Թղթաստրական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու
քիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ
հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առար-
կութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայ-
մաններով:

Զեմ-Բէ ԿՐ ԾԱԽՈՒԻ ՀԱՏՐ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیاده غلطاده (ماسيس) غزته سى اداره سى

ԽՐԹԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կա. ռափարութեան ֆոնդորիմ ներքեւ, երաշխաւորեալ զրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին հա. մար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապա. հովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գո. ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գոր. ծառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէնկողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ զաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հա. ռածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգ. ներու եւ ցաւառներու կարգ. մը պաշտօնատուներէն գատ, Բարի. զի՝ Օրէրա, Վօսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանզի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրի. տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէնի Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հալը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկե. րութիւնը, իր Կազմական Կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգա. մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան քըն. ութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիդի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագ. րութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances g n rales Maritimes՝ ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գոր. ծակալութիւնը:

Հանգե. — Պօլիս, Մահմուտ փաշա, Պէօլիք Երլտըզ խան, թիւ 14, Լա Դօնֆրանս ա. պահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական օնփականութիւնը եղող ան. քիֆաի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Հաֆաֆլար, թիւ 46, ուր գաւառներէն քառուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ZUUSUSSTUL Ի ԲԱՐԻՉ 182-8 1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ՓՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարգաւաճ (accumulation des bénéfices) ՅՈՌԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համալ, Բասաժ Գաբրէր Օլլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Լիւայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքացի մէջ



ՅՈՎԱՏԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵԴՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկահայ Դեսպանատան Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 61

Զրահեան աբաղքման

Պալպալեան ամէն օր ակոյալի ամէն տե. սակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր եւ է ժամուկ կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չիւնած ակոյաները: Յորեկները ակոյայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տողողին կամքէն կարեալ է:

Աղփասներուն օրի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, սժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ դաւաղաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ զեւորներէն՝ 100ին 15 զեղչով:

Հիւանդութեանց դէմ ապահով է եթէ իր մէջը հիգտնուի շիշ մը



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՈՒՆ)

(Ժողովարտ, պրօֆէսոր, հաղ, հարբուխ և բարակցաւ, և տղայոց անդամներու թուլութիւն, խոլ (սըրաճա) և բոլոր արեան աղետներու համար անգին դարման մըն է: Ընտելն անդամ առնուելով բժշկելու կ'ըսկսի և կը շարունակէ: Ըմեն տարի հաղարաւոր տղայք մահուանէ ազատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը՝ կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ետ կը բերէ և մարմնոյ կեանք կուտայ: Կեղերու մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Սիշտ վրան այս պատկերով վարդագոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

26

Բոլոր բեղաձայնները և բեղաձայնները ինչպէս:

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴԻՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցմահ բուսակի հիւղեր

VICTORIA
DE
BERLIN

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններուն վճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կունենան, սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1902ին Ֆր. 1,244,457,577
Պահեստի դրամ 1902ին » 451,284,214

Հաստատւած 1853 թ. 20ին ար. Բայական հրովարտակով եւ ուղղակի կառավարութեան հսկողութեան ներքին:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Գայո Պանքա
եւ Բրէտի Լիոնէ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԴԱԼՖԱՅԵԱՆ

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ԲԵՉԷՃԵԱՆ

Պոլիս Բաքրբերդօղլու խան
քիւ 45 եւ 45 Ի.

ՄԱՍԻՈՆ

54րդ ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 7

14 ՓԵՏՐՎԱՐ 1904

ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՇՈՒՐՁԸ

ՊԱՏԻՈՆԸ

Բառ մը որ՝ ըստ կէօթէի՝ մարդարտի պէս կը փայլի. որ կ'ոսկեզօծէ և կ'արժեցնէ կեանք մը: Պատիւը ճշմարիտ մեծութիւնն է, որուն անհատ մը՝ դրամի տուած դիրքէն անկախ, միայն իր կամքով, իր կարողութիւններով, իր անձին մշակումով կրնայ հասնիլ:

Պատիւը ո՛չ համբաւն է, ո՛չ շոշոկանքը, ո՛չ յաջողութիւնը և ո՛չ եսասիրութիւնը:

Համբաւը միշտ արժանիքի մը փառքը չի բերեր մեզի: Շատ անգամ չլացնող փայլն է ան, որ ոչնչութիւն մը կը ծածկէ և տգեղութիւն մը կը զարդարէ: Հեռաւոր արձագանգ մը՝ որ ձայնի մը իրական ելեւէջները կը բազմապատկէ և կը թաւացնէ, կրկնեւայթ մը՝ որ տկար միտքերու մէջ կը շինէ իր պատրանքը:

Յարաբերական կեանքին մէջ՝ քիչ մը ճարպիկութիւն, ժամանակի ոգին հասկնալու արթնամտութիւն, առեւեւոյթ փայլ մը ցուցնելու օժտումը՝ ապահով տարրերն են ունենալու համար շոշոկալից համբաւ մը:

Միափառները և անփորձները կը շլանան այդ հրապարակային կեղծիքէն. հմայուած աչքերով ոսկեհիւս ցանցի մը պսպղումը կը տեսնեն համբաւաւոր գրչին վրայ, և գրական գեղեցկութեան մը պէս կը ճաշակեն նոյնիսկ անոր հետեւական և գետնաքարշ գրուածքն ալ: Բայց անկաշկանդ և թափանցող մտքին առջև կը թափի այդ պոռոտ չպարը, և երեւան կուգայ բուն միջուկը, փտած կորիզը, ներքին պարապութիւնը: Գիտակցութեան դատաւարանը շատ մը գրական և եկեղեցական մեծահնչիւն անուններ կը կապտէ իրենց փառապսակէն, ու փոխադարձաբար շատ մը թաքուն արժանիքներ

չքեղ գեղեցկութեամբ կը վերածաղկին մուռացութեան փոշիներէն և մութ անկիւններէն:

Կեղծ համբաւին էական սարբն է շոշոկանքը, ամէնէն անմիջ և յետասկար հալումը մարդուն մէջ ուր երեւալու ճիգը կը խանգարէ ներքին կեանքին բնական զարգացումը: Յուցասիրութիւնը ինքզինքը ոչնչով արժեցնելու ունայնամտութիւնն է, որ բոցին տեղ փայլը, արժանիքին տեղ աղմուկը, գործին տեղ խօսքը, իրականին տեղ երեւոյթը ի տես կը դնէ: Երեւալու պէտքը՝ կոչումին բարձրութեան հասնելու անկարողութիւնը պարտկելու ձեւն է, անխուսափելի պահանջք մը դարձած ամէն միջակ մտքի համար:

Յուցամոլութիւնը մեր կեանքին զանազան աստիճաններուն վրայ երկնցուցած է իր պատաղիճը.— եկեղեցական, դրագէտ, հաւատքի մարդ, իր ցանցին մէջ ենք: Այդ կեղծիքը աչքառու է մանաւանդ մեր ասպարէզին մէջ, եթէ աստիճանն ու արժանիքը, ցուքն ու ջերմութիւնը գրկենդխառն և զուգընթաց չեն հոն: Բեմական պերճախօս մը կրնայ միտքով լուսաւոր հորիզոններու վրայ սաւառնիլ. յաւիտենական ճշմարտութիւններուն հանդիսական մուտք մը բանալ հոգիներուն մէջ. հմայել, վերացնել, յուզել և կազդուրել զանոնք, հզօր զգացումի մը՝ աստուածային գաղափարի մը անդիմադրելի հոսանքը սահեցնելով անոնց վրայէն. այդ հոգեշունչ քարոզիչը սակայն, եթէ բեմէն վար, իր ներքին կեանքին մէջ, հասարակ մարդոց մակարդակին վրայ հազիւ կրնայ մնալ, նա շոշոկանքէ վարակուած է, և քարոզչի եսական պատիւը չարժեցնելու իր վրայ:

Խօսքը օգտային է, թեթե հպանցումով մը կը խոսովէ, կը սարսուռացնէ հոգիին երեսը միայն, մինչ խորքը անայլայլ կը մնայ: Փարիսեցւոց արտաքինայարդարութիւնը, երբեմն կատակերգական ըլլալու չափ առաջ դացած, և ռաբբիններուն գերանութիւնը մեթոտը՝ չկրցան յառաջ բերել կրօնական նոր կեանք մը, ինչ որ ըրաւ անապատական ձայն մը որ մութի ծանր հարուածներ կ'իջեցնէր կարծր սիրտութու վրայ: Հիւլի, Շամայի ուսումնական աշակերտները աւելի արուեստով և օրինական հեղինակութեամբ կը խօսէին, բայց Յովհաննէս Մկրտչին ամբողջ անձը պերճախօս քարոզ մըն էր:

Նոյն ցուցամով երանգը մեր գրական կեանքն ալ գունաւորած է: Գրելու կամ գրադիտութեան կոչումը, ամէն լուրջ ասպարէզներու պէս, նախապատրաստութեան ժամանակամիջոց մը չունի մեր գրողներուն համար: Ամէն ոք որ գրիչ շարժելու փոքրիկ յարմարութիւն մը կը գտայ իր մէջ, առանց շինուած մտքի մը, առանց նկարագրի հաստատուն գիծերու, առանց որոշ ուղղութեան մը և յստակ գաղափարներու, որ գերադանց պայմանն է, առանց քչիկ մը կեանքը ապրելու, փորձ իմաստասէրի, փայլուն գրագէտի թեւերով կ'ուզէ ճախրիլ և տիրաբար խօսիլ կրօնական, ընկերային և մտաւորական հարցերու վրայ: Ահա թէ ինչո՞ւ տկար և փոխառիկ է այդպիսի գրիչ մը, իր յիշողութեան ատաղձը քով քովի բերելով՝ անձաշակ տաղաւար մը կը շինէ, մինչդեռ անոնք հոյակապ չէնք մը թանկագին բեկորները և գեղեցիկ մասերը կը կազմեն բուն հեղինակին քով: Գիտական կամ վարդապետական դրութիւններէ գաղափարներ փոխ առնել և անձա՞ կիրարկութեան մը մէջ ընդլայնել, արտայայտութեան կերպեր նմանցնել, ուրիշի աչքով և զգացումով զննել իրականութիւնն ու ապրիլ կեանքը, գրական շոշոփանք է, և այդպիսի գրչակը չարժեքներ իր վրայ գրագէտի պատիւը:

Յաջողութիւնն ալ միշտ պատուոյ երաշխիքը չունի իր հետ: Աշխատութեան դաշտը ընդարձակ է և այլազան, գործունէութեան

սահմանները լայն ըլլան կամ սեղմ, գիրքերը փայլուն կամ խոնարհ, պատուոյ պահանջքն է ոյժ և կորով սպառել, գործը լաւ կատարել, յաջողութիւնը եթէ պսակէ ջանքերդ՝ երջանիկ եւ. ապա թէ ոչ՝ պատուաւոր մարդ մը: Ամէն կոչում իր մրցանակն ունի, ամէն սկսնակ իր ասպարէզին ծայրագոյն կէտերուն կը նայի. — արեղան հովուական ցուպին, վաճառականը միլիոնատերի վարկին, հեղինակը գրական անմահութեան մը կը խաղձայ: Անհրաժեշտ չէ որ ամէնքն ալ այդ բարձրութիւններու վրայ փայլին. բայց անհատական և ընկերական երջանկութեան պահանջքն է որ ամէն մարդ ուղղամտօրէն և յարատեւ աշխատի: Բարոյական տեսակէտը միայն որակը, նպատակը, արժէքը նկատի կ'առնէ, եւ ոչ թէ չափը, տարածութիւնը ու երեւոյթը:

Պատուոյ զգացումը յաճախ կը շփոթուի նաեւ հաստիքութեան հետ, որ սրտին փոքրութիւնը, հոգիին ագահութիւնն է. ինք իր մէջ ամփոփուած գործունէութիւն մը, զոր չոգեւորեր հանրօգուտ գաղափար մը ևւ ազնիւ գործ մը: Ան որ իր նեղ շրջանակէն անդին բան մը չտեսներ, որ կղզիացում մըն է հանրային կեանքի հոսանքին մէջ, կը թարչամի եւ կը ծիւրի իջ առանձնութեան վրայ: Կեանքը հաղորդակցութեամբ կը անանի եւ կ'ուռճանայ, միտքերը շփումով կը լուսաւորուին, զգացումները շաղապատումով իրենց տաքութիւնը եւ փափկութիւնը կ'աւելցնեն: Եսասիրութիւնը հակասութիւն մըն է. անոնք կ'ապրին իւր ևւ ամբողջ կեանք մը, այսինքն պատուոյ կեանք մը, որ կ'արժեցընեն իրենց գոյութիւնը, կը շահագործեն իրենց հոգեկան գանձերը:

Պատուոյ ըմբռնումը այժմ բարեխղճութեան մը ճամբուն մէջ է, Մեծաքանակ հարստութեան մը ժառանգորդները չեն որ կը համարուին ընկերութեան ընտրեալ ղաւակները եւ մարդոց լաւագոյնները, այլ անոնք որ իրենց առանձնական ջանքով, իրենց մշտապէս աշխատութեամբ զառիւթերներ մաղլցած եւ գիրքերու տիրացած են: Ժառանգուած հարստութիւնը շատ անգամ մեղկ ու հեշտ մթնոլորտի մը պէս կը խափրեցնէ անհատա-

կան կորովն ու յառաջդիմութիւնը, մինչդեռ աշխատութեան տաժանքն է որ միեւնոյն ատեն կը ծաղկեցնէ հոգեկան կարողութիւնս ներքէ և մարդը իր հնարաւոր զարգացման կը հասցնէ: Յուցամոլները, եսասէրները եթէ յաջողին ալ փայլուն դիրքերու վրայ երեւնալ, անարժան են կրելու համար պատուոյ պսակը:

Պատիւը, ուրեմն, պսակն է բեղմնաւոր, անհասկանալի և զեղեցիկ կեանքի մը որ դիրքերու չնայիր, հասարակաց կարծիքէն վեր կը մնայ, գովեստէ կամ պարսաւէ չազդուիր: Իր միակ հրճուանքն է դիտակցութեան պայծառութիւնը: Եթէ ճշմարիտ մեծութիւն մը խօսի քու մէջդ, փոյթ չէ թէ պսակդ ըլլայ դափնիէ հիւսուած կամ ոչ, արժանիքիդ փառքը չի նսեմանար, պատիւը նորէն կրնայ ճառագայթել դաւար թուփերուն կամ չոր տատաններուն տակ:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

Արմաշ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱԺԽԱՐՀԷՆ

Ժ Ա Ն Հ Ա Տ Ի Ն Կ .

(JANE HADING)

Պուսի Թատերական կեանքը, նախորդ շրջաններուն վրայ, իր լաւագոյն, չքեղ էջերը աւելցուց այս տարի, մէկէ աւելի հռչակաւոր արուեստագէտներու իրարու յաջորդելովը,—մեծագոյն մասը Բըթի Շանի բեմին վրայ, որ, այս անգամ ալ, միակ Թատրոնը հանդիսացաւ փայլուն յաջողութիւններու տեսակէտով:

Դողէյն Բատէ, Նովէլլի, Տիկլին Ժուլէթ Լը Պլան Մէթէրլինկ, և վերջապէս Ժան Հատինկ,—ապահովաբար, Պուսի, ուրիշ տան, և ասիկայ կարճ ժամանակի մը մէջ, արուեստագիտական այսքան նշանաւոր դէմքեր տեսած չէր:

Մեծ Եօթնեակը.—Բարեկենդանի շարաթը —վերջին պահուն, իբրեւ արձանագրութիւն պարագայ, և իբրեւ գեղարուեստական այժ-

մէութիւն, նշանակելի կ'ընծայէ մասնաւորաբար Ժան Հատինկը որուն կեանքէն շահեկան նօթեր տալէ առաջ, իր խումբին խաղերը նիշել փորձենք նախապէս՝ սկսելով Frou—Frouէն որուն նիւթը աւասիկ:

Ժիլպէռթ Թէթեւաբարոյ ու պերճասէր աղջիկ մըն է որ ուրիշ մտածում չունի բայց եթէ անստղիւտ ճաշակով հագուել, նորաձեւութեան բոլոր պահանջները զոհացնել հրաշալի արդուղարդեր ընելով և իր այս յատկութիւններուն համար կոչուած է Ֆրու.—Ֆրու: Վալուէաս անուն երիտասարդ մը զինքը ամուսնութեան կը խնդրէ: Բայց իր թիթեւ նկարագրին պատճառաւ հաւանութիւն ձեռք չի կրնար բերել ու կը մերժուի վերջապէս: Նոյն պահուն վրայ կը հասնի Սարթօրիս կոմսը որ սիրահարած է Ժիլպէռթին: Այս վերջինը քոյր մը ունի, Լուիզ, որ միեւնոյն ատեն կոմսը կը սիրէ: Ժիլպէռթ կը կռահէ այդ սէրը, և կուզէ հրաժարիլ իր դեռէն, բայց Թախանձանքներուն առջև քրոջը որ կ'ուրանայ իր սէրը, տեղի տալով կ'ամուսնանայ կոմսին հետ: Իրենց բնաւորութիւնները, սակայն, չեն յարմարիր իրարու: Կոմսը լուրջ և իր ասպարէզին մէջ յառաջանալու կոչուած մարդ, չի կրնար իր ուղած դիրքերը դրաւել, պարզապէս կնոջը ընդդիմութեան պատճառաւ որ Բարիդէն դուրս տեղ մըն ալ երթալ չուզեր: Խեղճ մարդը ստիպուած կը համակերպի: Բայց իրերուն այս վիճակը երկար չի տեսեր. անհամաձայնութիւնը հետզհետէ կը սաստկանայ երկուքին միջև: Այս միջոցին, Ժիլպէռթի հայրը, Պրիկառ, ճամբորդութեան մը ձեռնարկած ըլլալով, Լուիզը մինակ չթողելու համար, և կոմսին ու կնոջը հրաւերին վրայ, իր աղջիկը անոնց տունը զրկելու կը հաւանի: Լուիզ նախ կը մերժէ, որովհետեւ վառ է տակաւին իր սրտին մէջ՝ կոմսին հանդէպ ունեցած սէրը, բայց վերջապէս տեղի կուտայ այդ առաջարկին առջև: Լուիզ առանին գործերով և իր քրոջ տղուն դաստիարակութեամբ և յըն. զբաղելով, տակաւ առ տակաւ և անգիտակցաբար Ժիլպէռթի տեղը զրաւելու ձեւը կ'առնէ Պ. Սարթօրիս տան մէջ,

ինչ որ բնա՛ւ կոմսուհիին գործին չի գար և բուռն նախանձ մը կը սկսի տածել քրոջը հանդէպ: Այդ պահուն, Վալուէաս վերադարձած է. իրենց նախկին յարաբերութիւնը զոր կը վերսկսին, սէրը զոր կը վերկոչեն, անկեղծ ու սրտազրաւ բան մը ունին: Սակայն ժիւլպէնթ որոշած իր տանտիկնոջ հանգամանքը վերստանալու, Վալուէասը կը ճամբէ ըսելով. «Ես իմ պարտքս կատարեցի, հիմայ տեսնե՛նք միւսները ինչպե՛ս իրենց պարտքը պիտի կատարեն»:

Այդ միջոցին, ազնուական մը կը ներկայանայ Լուիզի ձեռքը խնդրելու. ժիւլպէնթ կը հաղորդէ այս պարագան Սարթորիսին և կը խնդրէ իրեն աշխատիլ որպէս զի Լուիզ չմերժէ այս շքեղ բառքին, ինչպէս ըրած է շատերուն նկատմամբ: Կոմսը նախ կը ցաւի Լուիզի հաւանական մեկնումին համար, բայց իր կնոջը ստիպումին վրայ և Լուիզի ազագան ապահովելու մտածումով կը հաւանի այդ ազնուականը իր քենիին առաջարկելու: Լուիզ կը մերժէ, աւելցնելով թէ երբե՛ք ամուսնանալու միտք չունի. այն ատեն կոմսուհին կը միջամտէ. և բուռն տեսարան մը տեղի կ'ունենայ երկուքին միջև, երբ մանաւանդ Լուիզ կը խոտտովտնի վերջապէս... կոմսը սիրելը: Ժիւլպէնթ իր սրտին բովանդակ դառնութիւնը կը թափէ Լուիզի դէմ և բուռն շարժումով մը կը մեկնի անոր երեսին նստելով սա խօսքերը.

—Ամէն բան առիւր ինձ կէ. տուն, ամուսին, զաւակ, ուրեմն ամէնքն ալ քուկը ըլլան:

Եւ կ'երթայ գտնել Վալուէասը որուն հետ կը փախչին Վենետիկի մօտ գիւղ մը: Սարթորիս իր կնոջը փախուստը իմանալուն, ծանր հիւանդութեան մը կ'ենթարկուի, ուրիշ հազիւ կրնայ վերելու և իր առաջին մտածումը կ'ըլլայ փախտականներուն հետքը գտնել: Լիտայի մէջ ձեռք կ'անցունէ զանոնք և Վալուէասի հետ մենամարտելով կը սպաննէ զայն:

Վերջին արարուածին, ժիւլպէնթ, կրած յուզումներէն հիւանդ, մահամերձ, ուզելով վերջին անգամուան մը համար իր զաւակը,

Ժողովը համբուրել և իր ամուսինին ներմանը արժանանալ, գերագոյն անձկութեան և ապագայի կանխատեսութեան վայրկեանի մը մէջ, կը փախաքի և կը խնդրէ որ Լուիզ ամուսնանայ... Սարթորիս կոմսին հետ:

Ընկերական կեանքէ առնուած պարզ թատերգութիւն մը՝ Մէյլաք—Հալէվիին այս հինգ արարուածով հին խաղը, (25 տարի առաջ Théâtre Français-ի մէջ Սառա Պլուսարի կողմէ ներկայացուած) ուր կնճռոտ անցքեր կամ անակնկալ դարձումքներ չկան—տխուր պատրանքներէ, անհասկացողութենէ, ցաւալին վերադարձներէ զատ: Ժիւլպէնթի դերը զոր կատարեց Տիկին Հատինկ, իր պլոտա, պերճաշուք աղջկան միա՝ միտ բայց շուրջի անցած դարձածին տակաւ գիտակցողի բնութեամբ մը, յուզիչ ու խանդաղատեցնող բան մը ունէր որ կատարելապէս յաջող անցաւ: Անոնք որ ասկէց իբր տեսնեակ մը տարիներ առաջ տեսան մեծ Սառան՝ ժիւլպէնթի դերին մէջ, բաղդատութիւնը ընելով այս երկու հոշակաւոր արուեստագիտուհիներուն, կը յիշեն թէ վերջինը աւելի բնականութիւն կրցած էր դնել այդ դերին մէջ, մանաւանդ խաղին վերջին արարուածին ուր Սառան այնքան «յաջողած էր մեռնիլ»:

Ինչ որ ալ ըլլայ, սակայն, Ժան Հատինկ շատ ճարտարութեամբ կրցաւ մարմնացնել ժիւլպէնթի տիպարը, իրեւկին և իրեւ մայր, իր յուզումներովը, պաշտելի շփոթութիւններովը և այն ամէն ցայտուն շարժումներով որոնք գեղանի՝ բայց թեթեւամիտ Թրու մը կը յատկանշեն:

Այս խաղին մէջ է որ «կիները սիրելու առաջոյն եղա՛հակն է անոնց ուզածը կատարել» միամիտ բայց ուժով պահանջկոտութեան կը հանդիպինք զոր Հատինկ (ժիւլպէնթ) զմայլելի շարժումներով մը արտասանած պահուն, չէր կրնար արգիլել մեզ մը տածելու թէ, ունայնամիտ ու զուարճակալ աղջիկներուն՝ լուրջ ու ծանրապարոյ մարդոց հետ ամուսնութիւնը ամէնէն անհանդուրժելի վիճակներէն մէկը կրնայ ստեղծել երկու կողմին համար —ինչ որ խաղին «բարոյա-

կան» էր արդէն—եթէ մանաւանդ ամուսինը, իր բարձր զգացումներովը և մտաւորական զարգացումովը հանդերձ՝ չկարենայ կատարելապէս ըմբռնել իր կնոջը ամբողջ հոգեբանութիւնը:

Ալֆրէտ Գարիւսի Լա Շաթլէնը, ընդհակառակը բոլորովին նոր քիճե մըն է որ Բարիկ Ռենէսանս թատրոնին անցեալ տարուան յաջողութիւն գտած թատերախաղերէն մէկը նկատուած է:

Թէրէզ տը Ռել անուն գեղանի, ազնիւ ու բարի աղջիկ մը կը պատահի որ չարաբարոյ, դաժան մարդու մը հետ կ'ամուսնանայ: Տասը տարի անհանդուրժելի կեանք մը վարելէ վերջ, խեղճ կինը, որ տեղեկացած է միեւնոյն ատեն թէ ամուսինը ուրիշ մը կը սիրէ և թէ իր ունեցածը գրեթէ ամբողջ փճացուցած է, ամուսնալուծում կը խնդրէ: Եւ որ մըն ալ, պզտիկ զաւակը հետը առած, Տիկին Թէրէզ Բարիկէն հեռու, իր գաւառիկ բնակարանը կ'երթայ հաստատուիլ, միակ հին բեկորը որ մնացած է այնքան ինչքերէն ու անցած ճոխութիւններէն: Բայց հոն կը լսէ թէ այդ կալուածը գրաւի դրուած էր արդէն: Մերուկ հարուստ հօրեղբայր մը, այդ պահուն կ'ուզէ օգնել Թէրէզին, բայց իր կինը, չարասիրտ, անընտել ջատուկ մը, կ'ընդդիմանայ: Բարեբախտաբար ճիշդ այս ձգնաժամին՝ վրայ կը հասնի Անտուէ Ժօսան, հարուստ, գեղեցիկ և շատ կորովի նկարագրի տէր երիտասարդ մը որ կուզէ գնել այդ բնակարանը 300,000 ֆր. պատկառելի գումարի մը փոխարէն, և հօգ տեսնելով Թէրէզը՝ կը սիրահարի անոր ու կը փափաքի հետը ամուսնանալ: Զուր տեղ ջատուկը նենգութիւն կը բանեցնէ Ժօսանը ետ կեցնելու համար այդ նպատակէն, ուրիշ աղջիկ մը առաջարկելով անոր. երիտասարդը անդրդուելի կը մնայ իր որոշո մին մէջ. միւս կողմէ Թէրէզին ամուսինն ալ խառնուած է դորձին և ջատուկին կ'օգնէ իր կողմէն զրկարաութիւններ տեղացնելով կնոջը հասցէին. բայց Ժօսան ականջ չի կախեր, իբրեւ ապրած մարդ, որ կեանքը կը ճանչնայ, չ'ըմբռնէ իսկոյն շուրջը խաղացուած կատա-

կերգութեան բովանդակ տգեղութիւնը: Ու խաղը կը վերջանայ աննման ու լաւատես կարգադրութեամբ մը, պիտի ըսուէր անձեռուն իւրաքանչիւրին պատճառուած գոհունակութեամբ մը.—Ժօսան և Թէրէզ ամուսնացած են. Թէրէզին նախկին ամուսինը... 100,000 ֆրանք նուէր կը ստանայ, գաւառի բնակարանը կը նորոգուի. ջատուկին կողմէ Ժօսանի համար պատրաստուած աղջիկը իր սիրածին հետ կը կարգուի, ծերուկ հօրեղբայրը խիստ գոհ կը մնայ, ինչպէս նաև... ջատուկը:

Աւելորդ է ըսել թէ Թէրէզ տը Ռելի դերը Ժան Հատինկին վիճակած էր, զոր ներկայացուց գերազանցութեամբ մը որ իրեն յատուկ է: Իր հմայիչ գեղեցկութիւնը, շարժուձեւերուն ու արդուզարդին վայելչութիւնը նուազ չէին օգներ, սակայն, յաջողութիւնը կատարեալ ընելու:

Ներկայացուած երրորդ թատերգութիւնը հանրածանօթ է արդէն: Ո՛վ չէ կարդացած Տօտէի Սաֆօն, շրուտ վէպը այն հասարակ ցնծուհիին որուն տիպարը այնքան հրայրքով և տարփոտ զգացումներու, կիրքերու փոփոխակի մեղմ, համոզիչ ու միանգամայն փրփուռ յաջորդականութիւններով հզօրապէս և բնականօրէն պատկերացուց մեր առջև Ժան Հատինկ: Փանի լը Կուան ինկած կինն է որ կը սողոսկի կը գալարուի ու կը կառչի, մերթ բուն ու վայրագ, մերթ իր յանցանքներուն յայտնութեան պահուն ամօթապարտ, գետնաքարշ՝ բայց միանգամայն լկտի: Եթէ Տիւմա որդի, «Դամելիադարդ Տիկին»ին մէջ յանձին Մարիոլիթի, բարձր դասու պըրուհին կը բանաստեղծականացնէ, նոյնքան յաջողութեամբ Տօտէ վեր կ'առնէ ընկերութեան ծոցէն ժողովրդական աղիճը, դայն քննելով ու վերլուծելով իր ա՛հէն չարժումներուն ինչպէս խօսքերուն մէջ, և իր Փանի լը Կուանը Տիւմաի դիւցազնուհիին չափ տըլսորդէն շահեկան ու ցայտուն հանգամանքով մը կը ներկայանայ մեր մտածումին հանդէպ: Իբր երկու տարի առաջ, Բըթի Շանի մէջ, Ռէժան ալ ներկայացուց «Սաֆօն», Հատինկը տեսնելով Փանի լը Կուանի դերին

մէջ, այս առթիւ կարելի եղաւ բաղդատութիւն մը կատարել երկու աշխարհահոյակ դերասանուհիներուն միջև: Թէպէտ բարիչ-եան բեմին վրայ ժպն Հատինկ ստեղծած է ժամանակին Սաֆօի դերը, սակայն հարկ է խոստովանիլ թէ ամբողջ ճարտարութեամբը հանդերձ Հատինկի խաղարկութիւնը չընծայեր Ռէժանինին գերազանց բնականութիւնը— ասոր հակառակ, Հատինկի առած գական հաղուադիւա գեղեցկութիւնը շոր կ'արտացոլացնեն հրաշալի արդուղարդեր, և իր անձէն բղխող անդիմադրելի հմայքը կարծես կը պահպանեն հաւասարութիւնը:

Մ. ՌԻՂՈՒՐԵԱՆ

ՎԵՐՅՈՒԾՈՒՄ



Ի՞նչ աղուոր եր աճան պայծառ այն առտուն. Պատգամին անկիւնն էիր նստած դուն, ես՝ ոտներուդ ֆոլ՝ քեզ պատշոյ մէկ տղայ Զինջ նայուածքիդ շողերուն տակ հոգեմայ:

Քիչ մը անդին՝ տուններուն խիտ շարքէն վար, ծովուն հանդարտ, լուռ ծփանք կ'երեւար, Շրջափակուած հորիզոնին ֆոլ, հեռուն, Տարամ ծիրովն ամպածար լեռներուն:

Կը յիշե՛ս, չե՞, հոգի՛ս, այն օր ես քեզ ի՞նչ արցունքոտ արտի հոգի կարգացի, Զայնով մը որ ամեն վայրկեան կընդհատէր Հեծկիսուէն խուժող արես դէպ ի վեր:

Անբիծ լանջքդ տեղոտ հետեւով մ'այնծուփ ինծի լառած ծաւի աչերդ կիսախուր, Սեւեռունով մը տրամագին ու անբարբ Միջի բրբր գիւս կսկիծով մը հանդարտ:

Յետոյ հոգիդ հոգի՛դ անբիծ, կորո՛վի, Իր գանձն անհուն սիրոյ, գութի գորովի. Զոյգ մ'արցունքի մէջ խտացած, եւ յանկարծ Անով մարեց արիւս բոցը խորաբաժար:

«Ի՞նչու, քսիւ, դուն քեզ այնչափ կը յուզես. «Քեզի համար չե՞ միքե որ կ'ապրիմ ես. «Աօխարհ գեղ սին վիտերսով կը տանջես, «Ըսե՛, ամբողջ սիրքս միքե ֆուկըդ չե՞...»

Եւ գլուխս կոթնցուցած ծուկներուդ Մոռցայ բոյր հոգես մաշող ու անգուք. Սակայն. աւա՛ղ, այդ վայրկեանը հոգեթով Թուա գնաց փալակի մը պէս շուտով:

Եւ հիմա՝ որ այսօր հեռու կը պահեն Զիւ. աչերուդ ջինջ. փայփայող շողերէն, Եւ կենսատու բառերուդ կուռ պաշարէն՝ Սեւ խոհերը գիւս դարձեալ կը պաշարեն:

Միայն, քեւ հեռու պատշապան կոյս գրկիդ, Վերյուշունով հին օրերուն սակայն, գէթ, Մերք գիւս պատշոյ սեւ խաւարը ծակելով, Կը փարիմ մեր երազներու հոգեթով:

* *

Ի՞նչ աղուոր եր աճան պայծառ այն առտուն Պատգամին անկիւնն էիր նստած դուն. ես՝ ոտներուդ տակ՝ քեզ պատշոյ մէկ տղայ Զինջ նայուածքիդ շողերուն տակ հոգեմայ:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱՆԹԵԼ, ՀԵՌԱԳԻՐ

Մէկ երկու տարի առաջ բաւական խոսուեցաւ անթել հեռագրին վրայ. սակայն բաւական բան չգրուեցաւ անոր մասին՝ ծանօթացնելու համար զայն ժողովուրդին ամէն դասակարգերուն: Թողունք անթելը, թեւ լաւոր հեռագրի մասին իսկ ուսմիկ ժողովուրդը դեռ որոշ բան մը չի գիտեր ու անոր բնագիտական պատճառները իրեն անծանօթ կը մնան մինչեւ այն ատեն՝ երբ անթելը կուգայ կը հասնի: Կ'արժէ ուրեմն, որ իր ընդհանուր գիծերուն մէջ ներկայացնենք անթել հեռագրին մեքենականութիւնը ու այն եղանակը, որով հեռագրալուր մը կը հաղորդուի կայարանէ ի կայարան, հոգ չէ թէ այս ծանօթացումը ըլլայ քիչ մը ապագաման:

Անթել հեռագրին մէջ գործիքները ենթադրուածին չափ բարդ չեն. ընդհանրապէս, չափ

պարզ ըլլալով, իրենց վրայ զարմացնելէ աւելի ընութեան սքանչելիքներուն վրայ հիացնել կուտան: Մոռսի թելաւոր սովորական հեռագրին նման, երկու մասերէ կը բաղկանայ նաև անթել հեռագրին կազմածը: Առաջին մասն է՝ Ա. կայարանին մէջ գտնուած հաղորդիչը (transmetteur), իսկ երկրորդն է՝ Բ. կայարանին մէջ զետեղուած ընկալուչը (récepteur): Ա. կայարանէն մինչև Բ. կայարանը թել երկնցած չէ բնաւ: Մոռսի հեռագրին պէս. օգը թելին դերը կը կատարէ սքանչելի կերպով, և ելեկտրական ալիքները արագօրէն փոխադրելով մէկ կայարանէն միւրը:

Ըսածնիս հասկանալի ընելու համար աւելորդ չնկատուի կարգ մը բացատրութիւններ ելեկտրական ալիքներուն ու անոնց փոխադրութեան մասին, և պարզ նկարագրութիւնը հաղորդիչ և ընկալուչ գործիքին զանազան մասերուն:

Հաղորդիչ գործիքին հիմնական մասը կը կազմէ Ռիւհմըորֆի ելեկտրական կարծառը (կծիկը՝ ռաժկական բառով), որ պաշտօն ունի ելեկտրական բարդէ մը ստացած ելեկտրական հոսանքը ուժովցնելու: Այս կարծառին երկու հակառակ բեւեռները պղնձի թելով կցուած են երկու փոքր իրերահաւասար մետաղեայ գունտերու, իրարմէ որոշ հեռաւորութեամբ զետեղուած: Իւրաքանչիւր փոքր գունտ մետաղեայ հորիզոնական գաւաղանիկով մը կը միանայ ռւրիչ երկու մետաղեայ գունտերու, նմանապէս իրարու հաւասար և առաջիններէն աւելի խոշոր ըլլալու պայմանաւ:

Ելեկտրական բարդէն մեկնող երկու հակառակ բեւեռները, ընդհատում (interruption) մը ունին և այս ընդհատման կէտին վրայ զետեղուած է Մորսի բանալին (manipulateur de Morse), որ ելեկտրական հոսանքը ուղուած ժամանակ միայն հաղորդակցութեան մէջ կը դնէ Ռիւհմըորֆի կարծառին և հետեւաբար անոր կցուած երկգունտ հորիզոնական գաւաղանիկներուն հետ: Ասոր համար բաւական է մատի հպում մը տալ Մոռսի բանալիին կոճակին վրայ, որով կար-

ծառը կը լեցուի ելեկտրականութեամբ՝ ցորչափ մատը հպած կը մնայ բանալիին վրայ:

Այսպէս, հոսանքը երկու փոխադրիչ պղնձի թելերէն անցնելով, զօրացած կը մանէ երկգունտ մետաղեայ գաւաղաններուն մէջ, զորս կոչած են (oscillateur) ճօճող: Գաւաղանիկներուն ծայրերը գտնուած փոքրիկ գունտերը (որոնք թելով կցուած են կարծառին), կ'ելեկտրականան ու կարծառէն ելած ելեկտրական կայծը գնտիկներուն վրայ կը փայլի և ճամբայ կը բանայ գունտերուն վրայ հաւաքուած ելեկտրականութեան՝ դուրս խուժելու և մէկ գունտէն միւրը ճօճելու ու փոխադարձաբար: Եթէ հոսանքը տկար ըլլայ, գնտիկներուն մէջտեղ գտնուած օգը, որ վատ հաղորդիչ է, կը դիմադրէ ելեկտրականութեան և ճօճումները չեն կատարուիր մէկ գնտիկէն միւրը:

Վերոյիշեալ ճօճումները շուտ մը իրար կը չէզոքացնեն ու կարծառը բանեցնելու պէտք կայ՝ կրկնելու համար կայծերն ու փոխադարձ ճօճումները: Որպէս զի գործիքը լաւ գործէ, կայծը ուժգնօրէն արտադրուելու է և կարելի եղածին չափ արագ: Ասոր համար, պայման է որ գնտիկները միշտ յղկուած ըլլան և չժանգոտին ու գնտիկները միշտ չափուած հեռաւորութիւն ունենան իրարմէ, ուստի մեկուսացնող հեղուկներու մէջ կ'ընկղմեն զանոնք օր. համար, պէնզինի, բէթրոլի կամ իւղի մէջ. ինչու որ կարծրութիւն յաճախակի արտադրուելովը, գնտիկները կրնան օդէն ժանգոտիլ ու պէտք կ'ըլլայ միշտ յղկել զանոնք:

Չմոռնանք քսելու որ վերոյիշեալ երկգունտ գաւաղանիկներէն մէկէն մեկնող պղնձի թելը կ'երթայ հողին մէջ կը թաղուի, իսկ միւսէն մեկնող նոյնպէս պղնձի թելը կ'իլլէ վեր, օդին մէջ կը բարձրանայ կայմի մը օգնութեամբ, որ antenne կը կոչուի. անկէ է որ ալիքները կը մեկնին օդին մէջ: Այս կազմածը Hertz շինած ըլլալուն՝ իր անունովը կոչած է զայն հերցի զգուիչ (excitateur de Hertz):

Այս զգուիչը երբ գործէ սրահի մը մէջ, դիտելի է որ հոն գտնուող մետաղեայ առար-

կաները անխափան կ'երկտրականանան՝ հոգ
չէ թէ անոնք մեկուսացած(*) ըլլան կամ ոչ:
Մատի հպում մը այս մարմիններուն վրայ՝
երկտրական կայծ կ'արտադրէ, օր. համար եր-
կու դրամներու մէջ, երկու բանալիներու
մէջ եւն: Հէրց ուսումնասիրելով երկտրա-
կան այս գործունէութիւնը, մետաղեայ թել
մը բոլորեց շրջանակի ձեւով. անոր մէկ ծայ-
րը մետաղեայ գնտիկ մը հաստատեց ու միւս
ծայրն ալ (սակաւ ինչ հեռու գնտիկէն) սուր
թուլուց և այս պարզ դործիքով (résonna-
teur) հաստատեց ելեկտրական ալիքներու
գոյութիւնը, կոչելով զանոնք Հերցեան ա-
լիքներ (ondes Hertiennes):

Հէրցեան ալիքները ձայնական և լուսե-
ղէն ալիքներու կը նմանին ու անոնց պէս
օգին միջոցաւ կը յառաջանան ամէն ուղ-
ղութեամբ և անոնցմէ աւելի արագ կերպով:
Կ'անցնին անոնք նոյն իսկ երկտրականու-
թեան համար վատ հաղորդիչ նկատուած մար-
միւններէն ալ. զոր օր. պատի մը, քարի մը
կամ լերան մը արգելքը կարեւորութիւն
չունի անոնց համար. անոնցմէ կը թափան-
ցեն կ'անցնին. մէկ սենեակէն միւսը կարելի
է դգալ այդ ալիքները՝ հոգ չէ թէ երկու
սենեակները անջատուած ըլլան պատով մը:
Ծիշդ ասոր հակառակ ալ, մետաղեայ մա-
կերեւոյթ մը, նոյն իսկ շատ բարակ, կրնայ
արգելք ըլլալ և անգործութեան դատա-
պարտել այդ երանելի ալիքները:

Գալով քնկալուչ գործիքին, անոր մէջ
հրաշալիք մը համարուող ամենահիմնական
մասը Պրանլիի radioconducteur կամ co-
hereur ըսուած ապակեայ խողովակն է, որ
Հէրցեան ալիքները ընդունելու յատկութիւնը
ունի, ճիշդ՝ ինչպէս որ շանթարգելը կ'ըն-
դունի կայծակը: Այս խողովակը բաւական
նեղ է և իր ճիշդ մէջտեղը երկու լաւ հա-

(*) Երկտրականութեան մէջ մեկուսացում
(isolement) կը կոչուի՝ երկտրականութեան
հաղորդիչ մարմինները՝ վատ հաղորդիչ մար-
մինով մը շրջապատելը. օր. համար, իւղով,
պէնզինով, բէթրով, բարաֆինով, մե-
տաքսով, քաուչուով, կոմաքով (քոմալա-
քա), եւն. եւն.:

ղորդիչ մետաղեայ բլաքներու մէջ կը գտա-
նուի մետաղական փոշի մը, օր. համար,
նիքէլի և արծաթի խառնուրդ(*), որ սընդ-
կազօղուած (amalgamé) է կաթիլ մը սըն-
դիկով ու թեթեւակի դիզուած է խողովա-
կին այդ մասին մէջ: Երբ երկտրականու-
թիւնը անցնի այս խողովակին մէջ թելերու
միջոցաւ, որոնք կապուած են բլաքներուն
փակած պղնձեայ բարակ ձողերուն, (սեսակ
մը միտցի ձեւ առնելով) ներսի մետաղական
փոշին կը դիմադրէ երկտրականութեան և
հոսանքը կ'արգիլէ անցնելու: (Կը կարծուի
թէ, մետաղեայ փոշիին իւրաքանչիւր հա-
տիկը, լաւ հաղորդող ըլլալով, երկտրակա-
նութիւնը մէկէն միւսին անցնելուն մէջ մի-
այն դժուարութեան կը հանդիպի և դիմադ-
րութիւն մը յառաջ կուգայ):

Պրանլիի խողովակին մէկ ծայրէն երկու
թելեր կը մեկնին. մէկը ուղղաձիգ կերպով
օգին մէջ կը բարձրանայ՝ antenne կոչուած
կայմին օգնութեամբ, որ Ա. կայարանին an-
tenneին բարձրութիւնն ունի. ու գրեթէ նոյն
ուղղութեան վրայ անկուած է. իսկ միւսը
կ'երթայ միանալ՝ առանցքին մէջ երկաթի
կտոր մը պարունակող քիւ 1 պարզ կարճառի
մը մէկ բեւեռին հետ: Պրանլիի խողովակին
միւս ծայրէն նորէն երկու թելեր կը մեկնին,
ասոնց մէկը կ'երթայ հողին մէջ. իսկ երկ-
րորդը երկտրական քիւ 1 բարդի մը մէկ
բեւեռին հետ կը միանայ: Բարդին միւս բե-
ւեռն ալ կը հաղորդակից թիւ 1 կարճառին
միւս բեւեռին հետ, որով երկտրական հո-
սանքը հաստատուած կ'ըլլայ: Թիւ 1 բար-
դէն ելող երկտրականութիւնը որ Պրանլիի
խողովակին մէջէն պիտի անցնի, կ'արգիլուի
մեքտաղական փոշիէն. սա, ինչպէս որ ըսինք,
վատ հաղորդիչ հանգամանք մը կ'առնէ՝
մինչև որ երկտրական ալիք մը գայ և ինք
ստպաւորուի անկէ. ալիքը ստանալէն վերջ
լաւ հաղորդիչ կը դառնայ և թիւ 1 բարդէն
յառաջ եկած երկտրականութիւնը այն աստի
աղատ անցը կ'ունենայ Պրանլիի խողովա-

(*) Այս խառնուրդը պէտք է միեւնոյն
խառնուրդ արտադրուած ըլլայ, որպէսզի
փոշիհատերը հաւասար ըլլան իրարու:

կէն: Ասդին, ուրիշ բարդի մը (թիւ 2) մէկ բեւեռը միացած է երկաթի կտորի մը, որ կը գտնուի ճիշդ թիւ 1 կարծառին մէջի երկաթին դէմ. իսկ թիւ 2 բարդին միւս բեւեռը կը հաղորդակցի թիւ 2 կարծառի մը հետ, որ իր կարգին իրեն դէմ ունի նոյնպէս երկաթի կտոր մը. այս երկաթի կտորին ծայրը կը թնամ է հեռագրական նեղ կապոյտ թուղթէ երիզին, որ մեղանով թրջուած գըլանին յեցած է և միւս կողմէ երկու գլաններ իրենց մէջէն կը քաշեցնեն այդ կապոյտ երիզը: Թիւ 3 կարծառին միւս ծայրը միացած է թիւ 3 կարծառի մը հետ, որ իր կարգին դէմը ունի նոյնպէս երկաթի կտոր մը: Այս երկաթին ծայրը կ'երկարաձգուի և կը վերջաւորի գնդիկով մը, որ մուրճի մը դերը կը կատարէ և կը թնամ է Պրանլիի խողովակին ճիշդ մետաղեայ փոշին պարունակող մասին վրայ: Մուրճը կրող երկաթը հաղորդակից է պղնձի մեկուսացած թելով մը ուրիշ երկաթի մը հետ, որ անդին, թիւ 1 կարծառին մէջ գտնուած երկաթին շատ մօտ է՝ առանց սակայն կցուած ըլլալու անոր:

Արդ, երբ Ա. կայարանէն, Մոսկի բաժնալիին մատի շարունակական հարուածներ տանք, Հէրցեան ալիքները պիտի արտադրուին oscillateurներուն միջոցաւ և կայմին վրայ երկնցած թելը պիտի առաջնորդէ ու ցրուէ զանոնք ոգին մէջ: Ալիքները ոգին միջոցաւ պիտի քաշեն՝ ձայնական ալիքներուն նման և, բաց ի մետաղներէ, ո՛ր և է արդեւք, պատ, քար, ծառ, տուն, լեռ ևլն. ևլն. չպիտի կրնան արգելիլ զիրենք. վերջապէս պիտի հասնին ու պիտի քաշուին Բ. կայարանի մէջ գտնուող Պրանլիի հրաշալի խողովակին՝ նոյն կայարանին կայմին վրայ բարձրացած թելին միջոցաւ: Խողովակը, որ առաջ թիւ 1 բարդէն ելած ելեկտրականութեան դէմ կը դնէր, ալիքի ընդունուելուն պէս, պիտի թողու իր առջի հանգամանքը, ու լաւ հաղորդիչ դառնալով՝ ելեկտրականութեան աղաւանցք պիտի տայ. թիւ 1 կարծառին առանցքին մէջ գտնուած երկաթը պիտի մագնիսանայ(*). մագնիսա-

կանալով՝ իրեն դէմ գտնուած երկաթը կը քաշէ. այս վերջինը կը միանայ այն առնէն իր մօտը գտնուած երկաթի կտորին, որ, ինչպէս ըսինք, թելով մը մուրճին կապուած է: Այս միացումով թիւ 2 բարդին ելեկտրական հոսանքը կը հաստատուի և թիւ 2 կարծառն ալ կը մագնիսանայ. ան ալ իր դէմ գտնուած երկաթը կը քաշէ իրեն այնքան անգամ, որքան անգամ որ մատնահարութիւն ըլլայ Ա. կայարանին մէջ Մոսկի բաժնալիին վրայ և ասդին կապոյտ թուղթէ երիզին վրայ իրարու մօտ կէտեր կը գծուին մեղանի մշտադարձ գլանէն: Թիւ 3 կարծառն ալ կը մագնիսանայ վերջապէս ու իրեն կը քաշէ մուրճը կրող երկաթը, որ կը բաժնուի Պրանլիի խողովակէն և խողովակը կըստանայ լաւ հաղորդականութիւն: Ուրեմն, հետեւելով Մոսկի հեռագրական այբուբէնին, (կէտի և գիծի կրկնութեամբ և ետեւառաջութեամբ) կազմուած պայմանադրական այբուբէն մըն է) ամբողջ հեռագրաւոր մը կը գրուի կապոյտ երիզին վրայ: Երբ Ա. կայարանին մէջ մատնահարութիւնը դադրի, ալիքներն ալ կը դադրին արտադրուելէ, կարծառները իրենց մագնիսականութիւնը կը կորսնցնեն և մուրճը փոքրիկ հարուած մը տալով Պրանլիի խողովակին փոշի պարփակող մասին վրայ, կը բաժնուի իր դէմի կարծառէն: Խողովակը կը թողու իր լաւ հաղորդականութիւնը ու նորէն կըսկսի դիմադրել ու արգելք ըլլալ թիւ 1 բարդէն արտադրուող ելեկտրականութեան: Սպասելու է ուրեմն որ նորէն ալիք մը գայ և խողովակին վրայ զարնուի, որպէս զի կազմածը սկսի դարձեալ գործել, թուղթին վրայ գծելով հեռագրաւորը:

Ինչպէս կը տեսնուի, կատարեալ հրաշալիք մըն է անթել հեռագրի գիւտը, որուն երկու հիմնաքարերը կը համարուին Հէրցեան ալիքները՝ իրենց յատկութիւններով և Պրանլիի radioconductor կոչուած խողովակը:

Կաթ ձող մը անցընենք ու ձախարակին վրայ պղնձեայ թել մը փաթթենք «կլեթաբէրք»ով մեկուսացած, և ելեկտրականութիւն անցընենք այդ թելին մէջէն, ձախարակին մէջի երկաթ ձողը կը մագնիսանայ:

(*) Երբ դերձանի ձախարակին մէջէն եր-

Անթելը ցամաքի վրայ գործածուելով այն-
չափ մեծ օգտակարութիւն մը չունի, ըստ
որում նոր փորձեր կ'ըլլան ալիքները մէկ
ուղղութեամբ ղրկելու. սակայն առ այժմ
ծովու վրայ, երկու հեռաւոր նաւերու միջև,
դաշտի մէջ՝ երկու հեռաւոր բանակներու
միջև կարելի է դիւրաւ հաղորդակցիլ անթել
հեռագրով: Սկիզբները մինչև 60--70 քի-
լոմէթր հեռու կրնային ղրկել լուրերը, սա-
կայն մինչև 130 քիլոմէթր և աւելի հասցը-
նելէն վերջը, Մարգոնի, այդ հանձարեղ Ի-
տալացին, կրցաւ Անգլիաէն Ամերիկա և Ի-
տալիա լուրեր հեռագրել վերջերս:

Յաջորդ յօդուածով մը անթել հեռագրին
մէկ նոր դրութիւնը:

ՆՈՒՊԱՐ

ՃԱՐՈՆՅԻ ՉԻՆՈՒՈՐԸ

Ճարոնական բանակը ճանչցող հեղինա-
կութիւններ ամէնքն ալ կը վկայեն թէ Ճա-
րոնցի զինուորը՝ բոլոր աշխարհի ամէնէն ա-
ժաններէն ու ամէնէն աղէկներէն է: Չար-
մանալի պարագան սա՝ է որ ճարոնական
ներկայ զինուորական դրութիւնը լո՛կ երե-
սուն տարուան հնութիւն մը ունի. և դեռ
չառ հեռու չենք այն ժամանակէն երբ աղեղն
ու նետը կը ներկայացնէին այդ երկրին պա-
տերազմական գլխաւոր գործիքները: Ասոնց
գործածութեանը մէջ ա՛յնքան յաջողակ էին
որ հետեւեալ պատմութիւնը կրնանք վկա-
յութեան կոչել: Ճարոնցի զինուորի մը հրա-
ման կուտայ իր պետը՝ աղաաւել ձուկ մը, —
զոր իր մագիլներուն մէջ առած կը տանէր
գետարծիւ մը. — առանց սակայն սպաննելու
թռչունը կամ ձուկը. զինուորը կը կատարէ
իրեն եղած հրամանը, թռչունին սրունքնե-
րուն մէջէն կը խոյացնէ նետը, վար կ'իյնայ
ձուկը և ճամբան կը շարունակէ թռչունը,
երկուքն ալ անփնաս:

Բայց ներկայիս մէջ ճարոնական բանակը
զինուած է ու կը կառավարուի եւրոպական
է՛ն լաւ դրութեամբ: Երկար առեն գործած-
ուեցան ֆրանսացի և գերմանացի պաշտոն-

եաներ, ու ճարոնական բանակը կանոնաւո-
րապէս կը ղրկէր իր ընտրելագոյն մարդիկը՝
ծառայելու եւրոպական բոլոր բանակներուն
մէջ, ուրկէ յետոյ կը դառնային իրենց եր-
կիրը, սորվեցնելու համար սորվածնին: Դեռ
քանի մը ամիս առաջ, անգլիական բանակին
կարողագոյն սպաններէն մէկը մտաւ ճարո-
նական բանակը որոշ պայմանաժամի մը հա-
մար:

Ճարոնցիներուն անձնութիւնը պար-
զապէս ապշեցուցիչ է. երկրին ամէն դասա-
կարգերն ալ հոգի կուտան զինուորագրուե-
լու համար. համազգեստ կրելու համար խնդ-
կ'ըլլան: Եւ երբ ճարոնցի զինուոր մը սպան
նուի, անոր կինը կամ մայրը չողբար ու չի
կոծեր, այլ կ'ուրախանայ և փառք կուտայ
չաստուածներուն որ անիկա արտօնուեցաւ
դոհն իր կեանքը անանկ փառաւոր եղանա-
կով մը:

Տասնըեօթէն մինչև քառասուն տարե-
կան ամէն ճարոնցի՝ զինուորագրութեան
վիճակ քաշելու պարտական է: Նոր զինու-
որները վիճակով կ'ընտրուին ամէն տարի,
և այս կերպով ընտրուած 60,000 մարդիկ
իսկոյն կը ղրկուին զօրանոցները: Ասոնցմէ
դուրս ուրիշ 131,000 մարդոց ալ կը տրուի
որոշ տեւողութեամբ ծառայութիւն մը: Մաս-
նաւոր բացառութիւններ կը կազմեն վարժա-
պետները և բարձր դասի ընտանիքները,
բայց տեսակ մը ծառայութիւն կը պահան-
ջուի ամէնքէն ալ անխտիր: Այս կերպով
ճարոնական պատերազմիկ ոյժը կը ներկա-
յացնեն 384,000 զինուոր և 11,735 սպայ,
1,116 թնդանօթներով և 86,400 ձիերով:

Ճարոնցի զինուորը դրամական մեծ վար-
ձատրութիւն մը չըստանար: Պարզ զինուորին
ամսականն է տասը դահերան, ու նոյն հա-
մեմատութեամբ՝ իրմէ վեր պաշտօնեանե-
րունը:

Ճարոնական բանակը առաւելութիւն մը
ունի ուրիշներու վրայ, պարզ և դիւրին
կերպով մը պարենաւորուելով: Ճարոնցի
զինուորը պղտիկ մարդ մըն է, հինգ ոսք
երկու մատնաչափ, և սակաւապէտ է. նոյն
ատեն ալ սակայն չարքաշ է ու ջղուտ, և

նոյն իսկ լման ու ծանրապէս սպառապին ուսած պարագային՝ կը նախընտրէ վազել քան թէ քալել, ու այս ալ մղոններով և ժամերով:

Իր գլխաւոր կերակուրն է հօօբի ըստածը, որ է պարզապէս խաշած ու ետքը չորցուած բրինձ: Այս կերպով պատրաստուած բրինձը կը կծկուի և շատ քիչ տեղ կը բռնէ, և պատերազմի դաշտը դացող զինուորը շատ դիւրութեամբ ասկէ հետը կրնայ տանիլ եւ րեք օրուան բաւող պաշար իր ստպրակին մէջ: Երբ ճաշի պէտքը զգայ՝ ստպրակէն դուրս կը հանէ իր հօօբին, կը թրջէ զայն եռացող կամ պող ջուրի մէջ մինչև որ աղուոր մը ուռի և կ'ուտէ աղած ձուկով, եթէ այս վերջինը գտնելու չափ բաղդաւոր ըլլայ սակայն:

Ճարճոցի զինուորը՝ իր ստացած օրական քան փարայի վճարումովը և ուտելիքի անշնչութեամբը կը նկատուի մէկը աշխարհի ամենալաւ պատերազմական գործիքներէն, որ չի վախնար բանէ մը:

X.

ԽՐԱԿԱՐԱՆԱՆ ԵՐԵՎԱՆ

Մայր Աթոռի եկեղեցական գործերու մասին էջմիածնէն հասած վերջին լուրերը քիչ մը աւելի մեղմ են, և օրինական գործողութիւնները փոքր իշատէ թեթեւցած ցոյց կուտան:— Ս. Հայրապետին՝ առողջական վիճակը կայուն է. Ն. Ս. Սծութիւնը երկարատեւ հանգիստի պէտք ունի և մտադիր է Ս. Հովհաննէի վանքը փոխադրուիլ որուն կազմութիւնը օգը կրնայ նպաստել ալեղարդ Ս. Հայրապետին:— Ս. էջմիածնի պրօկուրօր Պ. Կանչէլին հիւանդութեան պատճառաւ արձակուած ըլլալով իր պաշտօնէն, Ռուսիոյ դատական նախարարութեան կարգադրութեամբ՝ անոր յաջորդը, Պ. Յրէնկէլ, իր պաշտօնին գլուխը անցեր է: Կըսուի թէ նոր պրօկուրօրը լաւ սպաւորութիւն մը թողուցեր է:

Երուսաղէմի վանքին աւագ-թարգմանի պաշտօնը, Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին

կարգադրութեամբ, յանձնուեր է Տ. Եղիշէ վրդ. Զիլինկիւհանին:

Եգիպտոսէն կը հաղորդեն թէ յունուար 28ին հանգիստաւորապէս տեղի ունեցեր է Պօղոս փաշա Նուպարի որդւոյն՝ Առաքել պէյի պսակադրութիւնը Օր. Նէվրիկ Ասլանեանի հետ, դուստր Գէորգ էֆ. Ասլանեանի, հայ և օտարազգի բարձրաստիճան հրաւիրեալներու ներկայութեամբ, Պապէշհատիկի ամարանոցին մէջ որ շքեղապէս զարդարուած էր: Ինչպէս յայտնի է, Պօղոս փաշա Նուպար՝ իր աղջկան ամուսնութեան առթիւ 1000 ոսկի նուիրեց Աղեքսանդրիոյ աղգ. վարժարանին, յանձնարարելով որ այս դամարին մէջէն մէյմէկ ամսական նուէր տրուի ուսուցիչներուն և աղքատ աշակերտներուն մէյմէկ ձեռք հադուստ շինուի:

Պատրիարքարանի նշանախօսութեանց արձանագրութենէն կ'երեւի որ 1902 տարւոյն մէջ 323 նշանախօսութիւն կատարուած է, մինչ 1903ին՝ անոնց թիւը կը հասնի 375ի, այսինքն 52 աւելի:

Հարսանիք.— Անցեալ շաբաթ օր տեղի ունեցաւ Բերայի մէջ՝ Տ. Հմայեակ Սրբազանի նախագահութեամբ՝ ծանօթ հրապարակագիր Արամ Անտոնեանի ամուսնութիւնը Օր. Արսինէ Մանուկեանի հետ, բարեկամներու ներկայութեամբ, որոնց մէջ կը նշմարուէին երկու գրագէտ Արմաշականներ՝ Տ. Մուշեղ և Տ. Կորիւն վարդապետները: Զեւնտուութիւնը կատարեց Տ. Ոսկի քահանայ: Կը շնորհաւորենք մեր բարեկամն ու աշխատակիցը եւ իր համակրելի Տիկինը իրենց ամուսնութեան առթիւ եւ անխառն երջանկութիւն կը մաղթենք:

Թիֆլիզէն կը հաղորդեն թէ յունուար 26ին, Արդիստական ընկերութեան թատրոնին մէջ շքեղ ներկայացում մը տրուեր է ի նպաստ հայ բեմին ծառայող բաղմաշխատ դերասան Պ. Աղայեանցի, անոր 25 ամեայ յօբելեանին առթիւ: Ներկայացման մասնակցեր է Տիկին Սիրանոյշ, կատարելով Համէլէթի դերը:

Խառն ժողովի հինգչարթի օրուան նիստին մէջ Ս. Պատրիարքը ներկայացուց Դա-

տական նախարարութենէն իր ստացած գիրը որով կը հաղորդուի թէ կայս. Իրաւէ մը կ'արտօնէ Վարչութեան կողմէ պատուիրակի առաքումը երուսաղէմ, վանքին հաշիւներուն քննութեան համար:

ԱԻԵՏԻՍ ԷՖ. ՔՕԼՕԼԵԱՆԻ ՄԱՅԸ

Ծանօթ փաստաբան Աւետիս Էֆ. Քօլօլեան, երկարատե հիւանդութենէ մը ետք, մահկանացուն կնքեց երկուշաբթի իրիկուն, և յուղարկաւորութիւնը կատարուեցաւ չորեքշաբթի առաւօտ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, նախագահութեամբ Տ. Բարթոլոմէոս արքեպիսկ.ի և յուղարկաւորներու ստուար բազմութեան մը ներկայութեամբ: Դամբանականը խօսեցաւ Տ. Գէորգ եպիսկ. Երէջեան: Հանգուցեալը, որ 75 տարեկան էր, կշնար նկատուիլ երիցադոյնը հայ փաստաբաններուն, և անցեալին մէջ ունեցած էր համբաւ մը և յաջողութիւններ որոնք իր արուեստակիցներուն առաջիններէն մէկը կը հանդիսացնէին զինքը: Շատ կարեւոր դործերու, մասնաւորապէս Հոգեւորի և Առեւտրական մեծ դատերու մէջ փայլած էր ձեռնհասօրէն: Աւետիս Էֆ. Քօլօլեան բնիկ Ակնեցի էր, տղայ հասակէն Կ. Պոլիս եկած, և իր ուշիմութեամբը, և խօսելու ու դատելու բնածին կարողութեանը շնորհիւ՝ հասած էր առաջնակարգ փաստաբանի զիրքին: Իր կարողութեան մէկ ապացոյցն է՝ Ներքին դործոց նախարարութեան փաստաբանի պատուաբեր պաշտօնին կոչուիլը, զոր բաւական տարիներ վարեց խղճմտօրէն: Արժանացած էր նաև Իւլայի Բ. աստիճանին և Գ. կարգի Օսմանիյէ ու Մէծիտիյէ պատուանշաններուն:

Ազգ. չըջնակի մէջ ալ ծանօթ դէմք մըն էր Աւետիս Էֆ. Քօլօլեան. ատենօք դործօն մասնակցութիւն մը ունեցած ըլլալով Պատրիարքարանի Ժողովներուն մէջ, և մասնաւորապէս Քաղ. Ժողովին որուն ատենապետութիւնը վարած է:

Անձնապէս, պատկառելի ու համակրելի

անձ մըն էր Աւետիս Էֆէնտի: Համով հոտով խօսակցութիւն մը ունէր, անէկտորներով լեցուն, որ զինքը մտիկ ընել կուտար ինչ դասակարգի ընկերութեան մէջ ալ գրանուէր: Նոյն իսկ վերջին տարիներս, ուր անողոք հիւանդութիւն մը հարկադրած էր զինքը գործէ քաշուիլ, մեղամաղձութեան ամպ մը չանցաւ բնաւ իր ալեւոր հասակին վրայ որ կը յամառէր առոյգ ու կորովի մնալ: Իր մահը սուգի մէջ կը թողու իր երեք դաւակները Վահան Էֆ. Քօլօլեան, Տիկին Լ. լիզա Վարժապետեան ու Տիկին Նուարդ Փափազեան, եղբայրները, քոյրը, թոռները եւ բոլոր պարագաները: Զորեքշաբթի օրը, համակիր բարեկամներու բազմութիւն մը համախմբուած էր իր դադաղին շուրջը եւ անոր հետեւեցաւ մինչեւ Շիշլիի աղբ. գերեզմանատունը ուր մարմինն ամփոփուեցաւ Քօլօլեան ընտանեաց դամբարանին մէջ, իր հանգուցեալ ամուսնոյն՝ Տիկին Տիրուհի Քօլօլեանի գերեզմանին քով:

Մասիսը մամուլին յանձնուելու վայրկեանին՝ բարեբաղդութիւնը ունեցանք ստանալու Կրօնային Դերթուած մը Տ. ԵՂՓՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒԹԵԱՆԷ, այսօրուան տօնին՝ Տեառնընդառաջի առթիւ, զոր յաջորդ թիւով միայն պիտի կրնանք հրատարակել:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ. — Զինեւճարոնական պատերազմին վերաբերող հեռագիրները շատ ուշագրաւ լուր մը չի բերին չաթթուս մէջ: Աւելի կարեւորութիւն ունեցաւ Լոնտոնի ռուսական դեսպանին, մեկնումը որ Զարին կը տանի իրաւարարական կարգ մը առաջարկներ զորս Անգլիոյ թագաւորը ընդունիլ տալ պիտի փորձէ: Դալով պատերազմական գործողութեանց, Նախասաքիէն հեռագիր մը ծանոյց թէ ճարոնական նաւաբաժինը Բօրը—Արթուրի առջեւ ռուսական չորս թորփիլանալաճներ բռնած է իրենց նաւազներով, թէեւ այս լուրը չի հաստատուեցաւ բացորոշապէս: — Ուրիշ հեռագրի մը նայելով. Ֆրանսա՝ Ռուսիոյ հաշւոյն 2 զրահաւոր, 6 յաճաւորակ, 11 թորփիլանալաճ եւ 24 թորփիլանաւ գներ է Զիլիէն:

ՊՈԼՍԱՅԱՅ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱՐԳԻՍ ԱՂԱՅԻՆ ՆՇԱՆՏՈՒՔԸ

(Ա. Լ. Պ)

1.

ԴՐԵՑ Ե. ՇԱԽԱՐԵՇ

Ա. Ն. Գ. ԻՆ

Ա.

«Իօնէօ!» ըրաւ Լեւոն, դրան քովը կանգնած բարձր զրապեղանին ետեւէն. չարածն չոր հազ մը որ կոկորդը մաքրելէ աւելի պաշտօն ունէր ուշադրութիւնը հրաւիրելու Հրանդին ու Թաթոս աղբոր որոնք քիչ մը վերօք, գետինը կ'ըսած՝ պատնիսի վեր տօքումայի ծրարներու դէպ մը կը բարձրացնէին:

«Իօնէօ!» ըրաւ Լեւոն, ու արմուկներուն վրայ յենելով, հօշիւներուն կրուկները աթոռին միջափայտին անցուցած, մարմինը բարձրացուց ի պատիւ Սարգիս աղա կուլիուկեանի, որ նոյն պահուն ներս կը մտնէր:

— Բարիօւս, աղաք, ըսաւ Սարգիս աղան, ձեռքի հովանոցը Թաթոս աղբոր յանձնելով, ու Մանգումէն աթոռի մը վրայ նետելէ վերջ՝ մաղաղային խորը իր թիկնաթուռին մէջ ղետեղուեցաւ:

Լեւոն ու Հրանդ նշանակալից ակնարկ մը փոխանակեցին:

Լեւոնին աչքերը կ'ըսէին. «Աղան ըրտէնկոթ է հագեր, Աղան ըրտէնկոթ է հագեր»:

Հրանդինները կը պատասխանէին. «Աղան նշանածին պիտի այցելէ, Աղան նշանածին պիտի այցելէ»:

Ու այս մտածումը երկու գրագիրներուն անհուն հաճոյք մը առթել կը թուէր: Դիտած եմ արդէն թէ թուով քիչ չեն անոնք որոնք տղայական հրճուանք մը կը զգան ամէն անգամ որ նշանաւոր քի, հարսիքի խօսքեր արտասանուին. կը ձանձնամ տիկին մը որ իր կեանքը «մարդ կարգելու» կրազուլը կ'անցընէ. իր հացադործէն մինչեւ իր հօրքեռորդին ամուսնացուց, և վստահ եմ որ ղեռը չարունակէ իր մարդասիրական ու առա-

քելական պաշտօնը. ու այս տիկինը չէ այն տարիքին մէջ որ Բրիգանթէի բերինն ջուրերը վաղցնել տայ և ոչ ալ այրի է, որով...: Տարօրինակը հոն է որ զլիսաւոր գործակիցը իր իսկ քսանամեայ մէկ հատիկ տղան է. «Դուն փեսան դտիր, ես հարսը գտնեմ» ըսած ըլլալ կը թուի մայրը տղուն, ու անկարող եմ որոշելու թէ ո՞րը աւելի դժուար պաշտօնը ստանձնած է, մայրը թէ տղան...:

Սարգիս աղան ո՛չ չոր հազին ուշադրութիւն ըրաւ ո՛չ ալ փոխանակուած նայուածքներուն. վստահաբար, մտահոգութիւն մը ունէր: Դանդաղօրէն բացաւ Մանգումքէն եկած նամակը. նախ հաշուեցուցալը աչքէ անցուց ու յօնքերը պլուտեց. «Ութը հարիւր ոսկի, վա՛յ շանդաւակ...» բացազանչեց, ոտքի ելաւ ու դրամարկզը բանալով պանքտոմաներու տըցակ մը հանեց ու համրել սկսաւ. արդիւնքը ժպիտ մը ծնցուց իր խոժոռ դէմքին վրայ. յետոյ սկսաւ նամակը կարդալ:

Մէկ քանի վայրկեան վերջ, նեղ ու խորունկ մաղաղախն երկայնքին սկսաւ քալել յամբօրէն, միշտ նամակը ձեռքը բռնած. յանկարծ դրագիրներուն քովէն անցած պահուն՝ կենալով սկսաւ խօսիլ.

— Հրանդ, բամպակը կէս բէնա տահա վրայ է դրեր... ծառքի եղած ապրանքներն առաւ խըյմէթը կիտմանք...: Աս ի՞նչ պէ՛շա է, հիշ նոր օրտինո չալիտի կրնանք տալ: 1818 նումբրօյէն երկու թեղ պակսեցու ըսինք ա՛, եւր է քի (նամակը կարդալով) «մեր վերջին նամակէն ի վեր զինները բարձրացած ըլլալուն, կը ցաւինք գիտցնելու որ ձեր ըսած զինին անկարելի պիտի ըլլայ գործադրել

նոյն իսկ երկու թել պակսեցնելով. եթէ եւրեք թել պակսեցուի...» : (Բարկուլթեամբ) Պակսեցու, պակսեցու, մա՞ղ պիտի չինենք... ճանճմ սա Մանչէսթըրցիներն ալ հոն կերթան ինկլիզի պէս օտուռն խափալը կըլլան կոր. մա՞րդ Աստուծոյ. խելքդ կըտրե՞ց մի, ա՛ռ լմեցուր... : Լեւո՛ն, նամակ մը գրէ՛, ըսէ՛ քի առնէ թող, աւելի մաւելի, ի՞նչ ընենք, ամէնուն հետ մէկտեղ. մալ չկա՛յ, պոռալո՞ւ է, ի՞նչ ընելու է. բիացային վրայ մալ չկա՛յ. հինգ հազար թուռ ու նենայինք՝ ամէնքն ալ պիտի ծախէինք : Ախ, մարդ հոն տուն ունենալու է քի... նէ իսէ, քիչ մը սերթ գրէ՛... :

Այս մենախօսութենէն վերջ, որուն յարգանք ունկնդրեցին Լեւոն և Հրանդ, Սարգիս աղան ժամացոյցը նայեցաւ. գալէն ի վեր երրորդ անգամն էր որ կը նայէր առանց սակայն ժամը միտքը կարենալ պահելու :

«Թաթոս աղբա՛ր, Մինասին ըսէ չի՞ մը քէպապով կէս օխա խառող բերէ թող» հրամայեց ու պտոյտը շարունակեց : Մաղազային մէջ Սարգիս աղայի կոչիկներուն ճօինչէն ու Լեւոնի գրչին կոխչէն զատ ձայն մը չէր լսուեր. երբեմն երբեմն Հրանդ տօքումայի ծրար մը կը ղետեղէր դէզին վրայ, տեսակ մը թնդիւնով :

— Տղաք, ըսաւ յանկարծ Սարգիս աղա, ես վեցին պիտի երթամ այսօր... ստիպողական գործ մը ունիմ Բերա : Ու լաւ դատեց յաւելուլ, մինչ Լեւոն քովն ախալի նայուածք մը կ'ուղղէր Հրանդին որ խնդուքը զսպելու ջանքով ձեռքի ծրարը գետին ձգեց, փոշիի ամպ մը բարձրացնելով :

«Ձեռքդ չբռնէ՛ր, ծօ՛ տղայ, պոռաց Սարգիս աղա, սրտնեղած, հէմ հիչ չե՞ն աւելեր կոր հոս, կիտես քի բողաւեօլին է» : Ու Լեւոնին դառնալով, «Կաղեանէն մարդ գայ նէ, ըսէ՛ ասօր գամեօյի պէտք չունինք... : Հա՛, Մանչէսթըր կը գրես կոր ա, գրէ՛ քի երկու շաբաթ ստակ չպիտի կրնանք ղըրկել...» :

— Գացան չորս հարիւր ոսկիի չափ բարա կայ, Սարգիս աղա, ընդմիջեց Լեւոն :

— Անոր պէտք պիտի ունենանք, պա-

տասխանեց կուլկուլեան, թելն մը կարմեւ լով, մինչ՝ աշճի Մինաս՝ կերակուրի ափսէն ներս բերելով խսիւրէ աթոռակի մը վրայ կը դնէր. ինքն ալ նմանօրինակ աթոռ մը առնելով կերակուրին գլուխը անցաւ : Ամբողջ ճաշի միջոցին սա՛կայն, աչքերը յամառաբար դրամարկղին կը դառնային. «Գացան չորս հարիւր ոսկիի չափ բարա կայ, Սարգիս աղա» կը կրկնէր Լեւոնին ձայնը մտքին մէջ, ու խղճի խայթի պէս բան մը կ'ունենար. իր խնայասէր ոգին կը գայթակղէր այն անօրի. նախ ծախսին դէմ զոր հարսնիք ըսուած կ'ենթադրէր. երբ կը մտածէր թէ առաջին անգամ չորս հարիւր ոսկի իրար բերելու համար ութը տարի տքնած էր. ութը տարի... ու քանի մը օրուան մէջ, գոհարեղէն, հա. գուստեղէն, կառքի վարձք, չքասեղան ու պղտիկ ճամբարդութիւն մը (որովհետեւ Սարգիս աղա Մանչէսթըրի հետ գործ ունենալէն ի վեր, մեղրալուսինը Եւրոպա անցընելու գաղափարին կրցած էր ընտելանալ) ու չորս հարիւրն ալ պիտի անհետանային... :

Ժպիտ մը սակայն լուսաւորեց դէմքը. «Մառին համար է» մտածեց. ու Մառին պատկերացաւ իր աչքին. ճկուն հասակ մը, նուրբ ու սլացող վիզ մը, դէմք մը որ գեղեցիկէ պակաս ու աւելի բան մըն էր, աչքեր որոնք քսանըութը տարիներու յոգնութիւնը մոռցնելով հանդերձ՝ հրապուրիչ մեղմութիւն մը ու խոհունութիւն մը ստացած էին. այսպէս կը պատկերանար իր առջև նշանածը իր ամբողջ քաղցրութեամբը ու հմայքովը, և Սարգիս աղա կը ժպտէր այդ պատկերին :

Ինք որ երկու ամիս առաջ ամուսնանալ անգամ մտքէն չէր անցընէր, փառք կուտար այսօր նշմուռած ըլլալուն : Երբ Սեփոնիկ աղա ճրագեան, Մառին հայրը, Գալբաք՝ ճինեւուն գլուխը արեւմեցի մը, որ իր հօր մէն ժառանգած Բերայի պղտիկ տանը մէջ հաղիւ կրնար ապրուիլ, իրեն կարգուիլ առաջարկեց, Սարգիս աղայի զարմանքը մեծ եղաւ : Ահա՛ քառասուն տարի է աշխարհք եկած էր, ու քսանըութը տարի է որ չուկան էր, բայց ասանկ բան մտքէն չէր անցած :

աշխատիլ— առտու ընէ մինչև իրիկուն, սենեակը աւելէն ու ծրարներ կրելէն սկսեալ մինչև ապրանք գնել ու ծախելը, վերջապէս ամէն աշխատութիւն— կեանքի միակ օրէնքը կը նկատէր. ստակ չիւնէ՝ կեանքին նպատակը: Ամուսնանալը նոր բան մըն էր իրեն համար, գրեթէ աներեւակայելի. առաջին մտածումը զոր ունեցաւ՝ ծախքերու աւելնալուն վախը եղաւ: Այն ոսկները զորս մէկիկ մէկիկ բերնէն կտրելով, հազուադէպ խնայելով, հաճոյքներէ զրկուելով մէկ կողմ դրած էր, այն ոսկիննրը որոնց փայլովը իր առեւտրական ու ընկերական prestigeը կը կազմակերպէր— ինք որ անտեսի տղայ, շաբաթը հինգ դրուշով համբաւելլալով սկսած, յետոյ օղնական ու կամաց կամաց սլաքիկ խնութիւնն ու վերջապէս «թոփտանճի» եղած էր, երկու դրաքի հրամայող և Մանչեսթրի ձիւպէրեան տան յաճախորդ, տուն մը որ իրեն երեք հազար ոսկիի վարկ մը բայած էր... երբ կը մտածէր թէ այս ոսկիններուն ձեռք պիտի դադնէր, տեսակ մը ընդլզում կ'ունենար:

Բայց Սեփոնիկ աղային վարպետ խօսքերը նոր դժգոհում մը կը ծնցնէին իր մէջ. յանկարծ կ'անդադրադառնար թէ մինակ եղած էր ամբողջ կեանքին մէջ, թէ իրմէ մեծ ու ամուրի մնացած քրոջը քիչ մը չորցած ու քացխած հոգածութենէն զատ սէր մը չէր ստացած և ոչ մէկէն, ու տարտամ, անորակելի ըզձանք մը կը խլրտէր իր մէջը, կարօք սիրուելու ու փայփայուելու, ու նոյնքան զօրութեամբ՝ քաղցր էակի մը զոր պիտի սիրէր և որուն վրայ պիտի դուրգուրար:

Սեփոնիկ աղա կը գուշակէր սօքումայի վաճառականին վարանումները ու՝ տեսած անցուցած մարդ, ինքն ալ ժամանակին յարգուած վաճառական, երկու տարիներ Մանչեսթրը բնակած, յետոյ սնանկացած ու խեղճ վիճակի հասած՝ պէտք եղած խօսքերը դիտէր զրուցելու և Սարգիս աղային զարթնումը կատարեալ ընկու համար. բարոյական օգուտներու քով ֆիզիքականն ալ չէր մոռնար, խորունկ հոգեբանութեամբ մը կնոջ

պաշտօնը կը սահմանէր. «Ըսենք քի մարմինիդ վրայ պիջիմսիդ տեղ մը ջիպան մը հանեցիր, ո՞վ պիտի խնամէ քեզի...» ու կնոջ այս երկնային պաշտօնին առջև Սարգիս աղայի աչքերը արցունքոտած էին:

— Ծանրմ, մէյ մը եկուր աղջիկս տեսիր, ըսած էր ծրագեան, վերջապէս: Ես ինքս ինչո՞ւ կուգամ կոր քեզի, քի էրէլ միկիկ չըլլայ ետքը, ես քեզ կը ճանչնամ, աղջիկս ալ կը ճանչնամ...:

Ու աղջկան գովեստը կը հլուսէր ճարտարօրէն. Ամերիկեան քօլէճէ շրջանաւարտ, երկու օտար լեզու գիտցող, ընտիր դաշնակահար և այլն եւ այլն: Սարգիս աղա որ իր լեզուն անգամ չէր գիտէր, որ իբր երածը՝ տութիւն Տօքսօն ցե իջունէն գերադաս մեղեդի չէր կրնար երեւակայել, կը հրճուէր մտածելով թէ կնիկով մը կրնար տիրանալ այն ամէն բաներուն որոնցմէ զուրկ էր. ու ինչ կրանութիւն, Եւրոպա երթալուն՝ թարգմանի անգամ պէտք չպիտի ունենար...:

Երբ Սարգիս աղա, կիրակի օր մը, յատկապէս չինուած ըրտէնկոթով մը, մէկուկէս մատ հաստութեամբ նոր ոսկի շղթայով մը պճնաղարդուած այցելութեան գնաց ծրագեաններուն, որոշման մը յանգելու դժուարութիւնը չկրեց. չլմբում մը ունեցաւ. — «Աղջիկ է չէ նէ հրեշտակ է» հարցուց ինքզինքին. անուշի ամանը ձեռքին մէջ դողդողաց, երբ Մատի իրեն ներկայացուց ավստէն, խօսքերը պակսեցան շրթունքներուն վրայ ու դռնէն դուրս չեւած՝ Սեփոնիկ աղային դարձաւ:

— Ծանրմ, խայնաթա՛, մատնին ե՞րբ պերեմ, հարցուց:

Սարգիս աղային մտքէն անգամ չանցաւ աղջկան հաւանութիւնը խնդրել. Սեփոն աղան իրեն կ'երգնուր որ Մառին խենթ կ'ելնէր վրան, իսկ մայրը ամբողջ հիացում կը տրած էր. «Ի՛նչ պօյերնին մէկ, տարիքնին յարմար, աչքերնին պիլէ իրար կըլմանի» կը կրկնէր խեղճ չուարած կնիկը, որ երեսունի մօտ աղջկանը ասանկ բաղդ երազին մէջ անգամ չէր յուսացած:

Ահա չորս շաբաթ է ի վեր Սարգիս աղա

երջանիկ էր. եթէ խօսք—կապին տուած քառասուն ոսկիին յիշատակը ու հարսանեկան ծախքերու սոսկազդեցիկ հեռապատկերը և սա Լիվրբուլի բամպակին անօրինակ սղութիւնը չըլլար, մարդկային երջանկութեան էն բարձր կատարը հասած մէկը պիտի ըլլար ան:

Բայց կուկուրեան՝ կարգի կանոնի մարդընաւ չէր ախորժած երբ տոջի իրիկուն Սեփոնիկ աղան մաղաղան հանդպելով խնդրած էր որ հետեւեալ օրը այցելութիւն մը տայ իրենց:

—Մառին խօսիլ կուզէ կոր ձեզի, ըսած էր, կընիկ խրամին ջօճուխ կ'ըլլայ, շատ աւանջ մի՛ կախեր, ամա մէջ մը կնա կենէ:

Աչքերը փախուստ կուտային ու լեզուն իր սովորական ճապուկութիւնը չունէր. Սարգիս աղա խոստացած էր, բայց սրտեղած էր որ դործի օրով—«դործի օր» ըսած ժամանակ անանկ չեշտ մը կը դնէր որպէս թէ աւետարանական ասացուած ըլլար—իր ապագայ կինը իրեն հետ տեսակցիլ ուզէր. եթէ Բերա բնակած ըլլար, իրիկուն պիտի յետաձգէր այցելութիւնը. բայց տունը Սկիւտար էր, ու չուզեց որ նշանածին առաջին խնդիրքը մերժէ...:

—Ստակի մասին ստնկ աղուոր բան մը գրէ, Լեւոն, ըսաւ յանկարծ Սարգիս աղան ոտքի ելնելով ու թաշկինակովը շուրթները սրբելով. դպրոցէ ելած տղայ ես, սանկ պիչիմի բան մը ըսէ:

—Լինցաւ արդէն, պատասխանեց Լեւոն:

—Կարդա՛ նայիմ, ըսաւ կուկուրեան հայրական չեշտով մը:

Լեւոնին մասին, որ հազիւ քսան տարին լրացած սեռիկի աղուորիկ երիտասարդ մըն էր, տեսակ մը համակրանք, գրեթէ սէր մը կը տածէր, ու կը խորհէր թէ օր մը Մանչեսթրի մէջ իր ներկայացուցիչը կրնար ըլլալ ան:

Լեւոն գրած նամակը կարդաց յամբաբար:

—Մօ, այօ՛ղըլ, ատ ալ բէք սերթ է եղեր. ինչ է նէ, ալ ատեն չկայ ու հէմ պէլքի տահա աղէկ է, կը վախնան տէ տըխաթ կ'ընեն:

Նամակը ստորագրեց, ֆէսը չտկեց, հովանոցը առաւ ու «Մնաք բարով» մը մըր-

մըռալով դուրս ելաւ. բայց դռնէն գլուխը ներս անցնելով.

—Լեւոն, մաղաղային դուռը կղպելէդ վերջը մէջ մը հրէ աղէկ մը, յանձնարարեց, յանձնարարարութիւն մը դոր կ'ընէր ամէն իրիկուն՝ այն օրէն ի վեր որ այդ չէնքը մտած էր ու խոշոր Միլնէրի դրամարկը մը գետեղած էր անոր խորը:

Բ.

Օղը այնչափ տաք էր որ օձիքը լիսիկէ աղատելու համար տոմսակի մը գինը աչքէ հանելով Սարգիս աղա Բանկալթիի թրամուէյը նստեցաւ: Բաւական ժամանակ իր սպիտակ հովանոցին վրայ խոշոր իւղի բիծ մը իր ամբողջ ուշադրութիւնը դրաւեց. շատ սրտեղեցաւ այդ արատին համար:

«Եղիսաբէթին անհոգութիւնն է» կը մըտածէր քրոջը ակնարկելով, ու մտքին մէջ կը դարձնէր այն նախադասութիւնները որոնցմով իրիկունը քարոզ մը պիտի կարգար անոր. մանաւանդ կը մեղքնար երսունըհինգ ղրուշները որոնցմով նոր մը պիտի ստիպուէր դնել, որովհետեւ իր արժանապատուութեան չէր ձգեր որ նոր փեսայ մը աղտոտ հովանոցով տեսնուի:

Բայց քանի Սեփոն աղայի տան կը մօտենար, անբացատրելի անհանդարտութիւն մը կը ծնէր մէջը:

«Թօճա՛ֆ, թօճա՛ֆ, մրմռաց, ինչ կ'ըլլամ կոր, ճանրմ»։ Սարգիս աղան զգուական ձեւ մը ունէր «ճանրմ» արտասանելու երբ ինքզինքին կ'ուղղէր այդ բառը. անոր մէջ կը դնէր իր վրայ ունեցած ամբողջ ու անհուն սէրը ու խանդաղատանքը...: Ուղեց դարձեալ հովանոցին արատին մտածել, բայց Մառիի սև մազերը ու շագանակագոյն աչքերը կը գերէին իր երեւակայութիւնը. աչքերը մանաւանդ որոնք միշտ առեղծուածային բան մը պարունակել կը թուէին Սարգիս աղային. «Կիտես քի պատի մը ետեւէն կը նայի կոր» ըսած էր ինքնիրենը անգամ մը, ուղեիով քահ մը բառերու մէջ ամփոփել անկէ ստացած վրդուիող տպաւորութիւնը...: Բայց Սեփոն աղան այնչափ պերճախօս էր, ու Տիկին Ճրագեան անանկ կը ճառէր Մառիի սիրոյն վրայ:

(Շարունակելի)

Արսօնսկր Կ. Ս. Իիթիւճեւն

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԿ Օրագրի

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՏՈՒԹ՝ ՄԱԼԽԱՍԵԱՆ

(ՎԿԱՅԵԱՆ ԲԱՐԻՁԷ)

Մ Ա Ս Ն Ա Գ Է Ց

կանանց հիւանդութեանց, մանկաբարձ, վիրաբոյժ

Բերայի դարմանատունը փոխադրած է՝ կրկին Բերա Սագըզ Աղաճ փողոց, թիւ 26, ուր հիւանդներ կ'ընդունին ամէն օր կէս օրէն վերջ ժամը 1—4 (Ը. Ե.) :

Ժամադրութեամբ՝ կէս օրէն առաջ :

Կարօտ հիւանդները կը դարմանէ Բերայի (Սր. Երրորդութեան եկեղեցւոյ) Աղքատախնամի դարմանատունը՝ ամէն հինգշաբթի՝ առաւօտէն մինչեւ կէս օր :

Ծանօթ. — Վիրաբուժական, ուղղա- մարդական (orthopédique), ծննդաբերա- կան եւ ամէն կերպ արդանդի հիւանդու- թեանց շատ կարեւոր գործողութիւնները- ենթականերու տուններուն մէջ՝ կատար- եալ ապահովութեամբ եւ մեծ յաջողու- թեամբ կարենալ կատարելու համար՝ գի- տական ամենավերջին մեթոտներու հա- մադասախանող կատարելագործեալ գոր- ծիքներու մանրամասն ամբողջութիւնը ոգացուած է :

ԿԱՐԱՊԵՏ. ԷՅ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգ- մանած գիրքերէն՝ հետեւեալները կը գըտ- նուին Պաղտատեան գրատունը եւ մայրա- քաղաքիս միւս հայ գրավաճառներուն քով :

	հասոյ	դրո
Կարմիր մարդոց երդումը	2	10
Ընտանեզուրկ	2	12
Փարիզի ամուսնութիւնները	1	5
Թափառական Հրեայ	4	50
Արուարձանին տղան	3	15
Հանրակառքին ոճիւրը	1	5
Սկզբունք Բաղ. Տանեսութեան	1	4
Ընտանեկան գողտիքներ	3	15

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ Թ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Հեռագր. Հասցե՝ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ — ԿԻՐԱՍՈՆ

Գնում եւ վաճառում, ներածում և ար- տածում ի հաշիւ :

Բացարձակ պայման՝ ԿԱՆԽԻԿ :

Յանձնառուիցէք պիտի գնահատէ յաճա- խորդը : Կրկնապատիկ կը տուժէ ո՛ր եւ է վնաս, որ արդիւնք ըլլայ գարծակալութեան անհոգութեանը : Հրապարակի մասին պահան- ջուած ծանօթութիւնք փութով կը ղրկուին, եթէ 1 ղրչ. նոց փուլ ներփակուի : Յայտա- գիրը կը ղրկուի պահանջողներուն : Դիմողը երբեք չի վնասուիր. ընդհակառակը :

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճիշտ և աւելի խնամով պատրաստուած և արդէն հրատարակուած է :

Պարզ լաթակազմ 3 դրո.
 Ընթիւ լաթակազմ 5 »
 ՈՍԿԵՁՕՄ ՓԱՌԱԿԱԶՄ 8 »

{ 25 օրինակէն աւելի գնող- ներուն գոհացուցիչ գեղջ

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավաճառներու եւ քոթա- վաճառներու ֆով : Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ,

ՊԱՅՊԼ ՀԱՈՒՁ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈՒՍԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուժազուլ արտօնուած

Կեդրոնատեղին Բեռլին քաղաքում, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈՒՍԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԻՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ-ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՂԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՂԵԿԱՌՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՒՐՈՆ ԴԵՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,666,667	Ֆրանք
Երաշխանորութեան գումար աւելի քան	137,300,000	»

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամագլուխ եւ վնասուց հատուցում	282,000,000	»
--	-------------	---

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տուկոս	54,000,000	»
---	------------	---

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան Լաւ, Վոյվոտա, Ղալաթիա:

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԵՅՔՕԶ)

ԱԵՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵԼ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ աղբիւրին ջուրը, ախորժահամ եւ վճիտ, յանձնարարուած է մայրաքաղաքիս ականաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատկութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէռ Արէոի տարրալուծած է զայն եւ Թալտէլէնի ու Դանրգաւաքի ջուրերէն գերազանցապէս լաւագոյն դասած է, ստուգելով որ անոր ջրաչափական աստիճանը 10 է եւ բնաւ ստամբքի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն շատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարութեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի աղբիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ, չիչերը ու անկառնեը հոն լեցուելով ու զմոսուելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐԻՆ գերընտիր ու անմրցելի ըլլալը հաստատած են նաեւ, քիմիագէտ Տօքթ. Մանսիէ զատ, հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տօւքա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուչի, Զէրրի, Սթէքուլի, Ավիչիանօ, Մալի, Միրապէլ, Բանայօթ պէյ, Պալիաիս, Բարաքովսքի, Բլէմով, Մօրթման, Տէլլասուտա Ֆայիք փաշա եւ Սիմօնֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲԵՐԱ, ՄԵԾ-Փողոս, Հալէպ Խան, Թ. 7:— ՊՈԼԻՍ, Սիրքէճի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը ինչպէս նաեւ Շուկային Նուրի Օսմանիյէի դրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն զատ, Բարաքովսքի ջուր: Դիները շատ ատան են՝ Ժողովրդեան դիւրամատչելի ըլլալու համար:

Փորձի համար չի մը գնեցէք ՍՐՄԱՔԷՇԻ ջուրէն, եւ այնքան համով ու թեթեւ պիտի դառնէք, որ վստահաբար պիտի գործածէք զայն այսուհետեւ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՀՄԱՅՆԱԿ ՔԱՀԱՆԱՅ ԷՔՍԷՐՃԵԱՆԻ Տա-
րերք Աշխարհիկ լեզուի. հատոր Ա., Դ. Տը-
պագրութիւն, գին 3 դհ. Կեդրոնատեղին
ՄԱՐԳԱՐԵԱՆ ԴՐԱՏՈՒՆ:

ԲՐՈՅ. Ա. Է. Տ. ՅԱԿՈԲԵԱՆ, սիրուն
գրքոյկի մը մէջ ամփոփած է Տըք. Ուոչ-
պըրնի քարոզները, ընթացաւարտ կարգի
ուղղութիւն: Դրքին սկիզբը կը գտնուին Տըք.
Ուոչպըրնի շատ լաւ հանում: Կարկերը,
եւ այն գեղեցիկ քար: զը զօր խօսեցաւ իր
70 ամեակին առթիւ, պատմելով իր կեանքը
Դին թղթակագրի 5 եւ լաթակագրի 8 դր: :
Կը ծախուի ի Պոյպը. Հաււը: Հասոյթը պի-
տի գործածուի բարեսիրական նպատակի:

ԴՐԻԴՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Պատկերազարդ ըհարձակ Աշխար-
հագրութիւն. բարձրագոյն դասընթացք.—
Գին 6 դր:

2. Պատկերազարդ Աշխարհագրութիւն
եւ Տեղագրութիւն Կ. Պոլսոյ. Տարր. դա-
սընթացք:— Գին 2 1/2 դր:

Կը գտնուին բոլոր գրաւմատագ քով
եւ կը ծախուին գոհացուցիչ գնով:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-
վերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբււր մըն է:
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՐԱՏԱՆ

The Singer Manufacturing Co.

Ձեռքի, ուսի ու ուսի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճա-
ռատանց մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՍՆԱԿՆԵՐԸ

- | | | |
|---------|---|--|
| ՌԵՐՍ. | } | 1. Մեծ փողոց, Պոն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱՍԱԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամլէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյաղիտ, Թրամլէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԱԻԻՏԱՐ | | Զարը Պոյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կասաբեալ երախաւորութիւն:

Մասնանիւր գաւառաց բոլոր ֆաղաֆեւուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐ ՀԵՍԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիեննա)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՐԻՍ ԼՈՐԻ ՏԵ ՊԱՎԻԶՈ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդեմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնի կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Գոհի Լիօնի

Ընդհ. եւ լիազօր. ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻՒ 200

Կալաթա-Մէրայի Լիսէին դ'մ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան Ժ. 11½

ԲԵ. ԳԵ. ՈՒՐ. օրերը ճեմ մինչեւ 11½

Երբակի օրերը ժամադրութեամբ

ՉՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ՆԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն,
Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
քաւմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն,
որոնք ձմրան եղանակին յարմարագոյն ըմ-
պելիննի:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիլին:

Կ. Պոլիս, Պահէ Գափու,
ձէլալ պէյ խան, Թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ,
գլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս նշանակուած:



ՏՕԳ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

	ԳՐԵ.
Դիտական շարժում	Բ. տարի (188) 20
» » »	Գ. » (1887) 20
Բնական Պատմութիւն Ա. հատոր (Կեդ.	
Հիւսուածաբանութիւն եւ Մարդկային	
Կազմախօսութիւն ու Բնախօսութ. Դա-	
սադիրք երկրորդական վարժարանաց	40
Նախորդին համառօտը. Դասագիրք Նա-	
խակրթարանաց	8
Ծագումն հայ տառից (Պատկերաւ Իզմիր-	
կանց մրցանակաւ)	10
Մանրէաբանութիւն	10
Տիեզերք եւ իւր կազմութիւնը (Ֆրանս)	10
Առողջապահութիւն	25
Մանրական Գործարանք (Կազմախօսու-	
թիւն, Բնախօսութիւն եւ Առողջապահութ.	6
Մարդկային Սաղմնախօսութիւն	5
Բառացուցակ Ախտանուանց, Բ. Տիպ.	3
Տարուինականութիւն, Գ. Տիպ.	3

Կեդրոնացեալին է

Մաթէոսեան Տպատրան, Ֆիննանճըլար, Կ. Պոլիս